ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Երևան-1, Նալբանդյան փ. 104

«06» ապրիլի 2016թ. № 24/665.

Օր. թիվ 1

Ռուբինա Փերումյանին (Մինասյան)

ք.Երևան, Հանրապետության 62 շ., բն.32

Ի պատասխան Ձեր 29.03.2016թ. դիմումի

Հայտնում ենք, որ Բաղդասար (Բաղդիկ) Խաչատուրի Մինասյանը ծնվել է 1902թ. Իրանի Ղարադաղի շրջանի Ողա գյուղում, Իրանի քաղաքացի, բարձրագույն կրթությամբ: Իրանի Ռեշտ, Կազվին, Թեհրան և Թավրիզ քաղաքների դպրոցներում աշխատել է որպես ուսուցիչ: 1919թ-ից Իրանում հանդիսացել է դաշնակցության երիտասարդական միության անդամ, այնուհետև՝ նույն միության կառավարման նախագահ: Բ.Մինասյանը 1939-40թթ. եղել է Ատրպատականում (Իրան) դաշնակցության կենտրոնական կոմիտեի անդամ, ղեկավարել է կուսակցության դպրոցը և աշխատանք տարել կուսակցության երիտասարդական միության հետ, 1941թ. հանդիսացել է նույն նահանգի դաշնակցության կենտրոնական կոմիտեի նախագահ:

Բ.Մինասյանը՝ որպես դաշնակցության կուսակցության ակտիվ գաղափարախոս և նվիրյալ, սովետական իշխանության դեմ քայքայիչ աշխատանքներ տանելու, բոլշևիկյան կուսակցության և նրա մամուլի դեմ հանդես գալու համար 07.01.1944թ. ձերբակալվել է Թավրիզում, հետագայում ձերբակալումը ձևակերպվել է ՍՍՀՄ ՆԳԺԿ հատուկ խորհրդակցության 12.03.1944թ. որոշմամբ և 02.09.1944թ. դատապարտվել է 10 տարի ազատազրկման:

ՍՍՀՄ Գերագույն դատարանի զինվորական կոլեգիայի 05.06.1953թ. որոշմամբ Բ.Մինասյանը վաղաժամկետ ազատվել է պատիժը կրելուց և որպես իրանահպատակ 03.07.1954թ. հանձնվել է Իրանի իշխանությանը:

Այլ տեղեկություններ առկա չեն:

Հաշվառման և արխիվային ֆոնդերի
վարչության պետ

Գ. Տեր-Վարդանյան

Report of the RA National Security Service, "In response to your March 29, 2016 inquiry," signed by G. Ter-Vartanian, Director of Accounts and Archives